ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 230-Ա « 15 » հունվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ Ս.ԽԱՆԶԱԴՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.77 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵԴԱ ՊԵՏՐՈՍԻ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սեդա Պետրոսի Միրզոյանի (ծնված 19.02.1950թ.) դիմումը (17.08.2018թ. բ.1380305) :

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 08.09.2018թ. հ.ԱՏ-31/08/2018-1-0208 տեղեկանքը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 02.05.2024թ. հ.Հ-4416 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 06.10.2025թ. հ.20-Ել-Մ-700925 եզրակացությունը, համաձայն որի ք.Երևան, Նորք-Մարաշ Ս.Խանզադյան փողոց հ.77 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով.

1.Վերականգնել ք.Երևան, Նորք-Մարաշ Ս.Խանզադյան փողոց հ.77 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Սեդա Պետրոսի Միրզոյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 190.41քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 190.41քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 204-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Նորք-Մարաշ Ս.Խանզադյան փողոց հ.77 հասցեում գտնվող 190.41քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ